Զաքարիա Կաթուղիկոսի գերեզմանը արդէն գտել եմ [1]), ըստ տեսութեան պարզ ինքն է, բայց գրերը Սինդի Արաբի են, լաւ կարդացող չկայ, անշուշտ հարկաւոր է բացել գերեզմանը, բայց հիմայ դժուար է ներկայ հիւանդութեանց մասին. սոյն գերեզմանը գտնվում է բերդի հարաւային դռնից դէպի հարաւ մօտաւորապէս յիսուն կամ վաթսուն սաժէն հեռաւորութեամբ. ուրեմն անպատճառ այդ պիտի լինի. ստուգութեան համար աշնանը մի կերպ կ'բացանեմ»։

1892 թուին և այնուհետեւ համաճարակ ախտը մոռանալ տուեց սմեն բան. ուստի և Դարբանդից ոչ մի տեղեկութիւն չստացայ արձանագրութեանց մասին։

1894 թուի մայիսի 30ին՝ Ծփխիսումն եղած միջոցին Դարբանդի մեծ արձանագրութիւնքը անձամբ ցոյց տուեցի սիւնի մահմեդականաց միւֆտի էֆէնտի Հիւսէյին Դայիրօվին և խնդրեցի թարգմանութիւնը. միւֆտին շատ նայելուց յետոյ՝ ասաց, Բիւֆա գրուած է, և լաւ չէ արտագրած. ուստի և դժուար է կարդալ և թարգմանել։

Դարբանդում ճանապարհորդի հետաքրքրութեան առարկայ է և Քառասունք (Ղըրխլար) անունով գերեզմանատունը, ուր յիրաւի 40 գերեզմանաքարեր կան արապական թէ տաճկական գրերով, որոց համար զանազան պատմութիւններ են յօրինում դարբանդցիք, և վերջապէս համարում են նահատակները (շէյիտլար), թէ ինչ նահատակներ են, չիմացանք։

Բերդի մէջ կայ այսօր մի պարսկական մզկիթ (մէջիդ-ազութատուն), որը աւանդութեամբ ասում են Աղուանից կաթուղիկոսարանի վրայ է շինուած։ Աղուանից կաթուղիկոսները երբեմն այս տեղ են ընակուել, ինչպէս Ս. Գրիգորիսի նահատակութեան տեղիքը երևում է, կաթուղիկոսութեան առաջին դարումն յամի Տեառն 340—480. ուստի և աւանդութեամբ սովորած դարբանդցիք ցոյց են տալի հայոց հին գերեզմանատան մէջ քանի կաթուղիկոսաց գերեզմանք, զոր օրինակ՝ Զուլի-

[1]) Ըստ պատմութեան Դարբանդում ութ կաթուղիկոս կան թաղուած, որոց մին է Զաքարիա կաթուղիկոսն։